ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 5 հոկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1

դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա.Գյուլումյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Միսակ Մարտիրոսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Միսակ Մարտիրոսյանը 20.09.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները ճանաչել ՀՀ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված մի շարք դատավարական ժամկետներ իր նկատմամբ կիրառվել են խախտմամբ:

Դիմողը նշում է, որ իր համար անհասկանալի է դատարանների կողմից խնդրո առարկա դրույթին տրված մեկնաբանությունն առ այն, որ այն վերաբերում է միայն քրեական վարույթի մասնավոր մասնակիցներին: Նրա կարծիքով՝ դատարանները դատավարական ժամկետների պահպանման պարտականությունը վերապահել են միայն քրեական վարույթի մասնավոր մասնակիցներին՝ ազատելով դատավարության հանրային մասնակիցներին այդ պարտականությունից:

Դիմողի կարծիքով՝ իր գործի շրջանակներում իրավակիրառական պրակտիկայում ձևավորված իրավական դիրքորոշումն առ այն, որ դատավարական փաստաթղթերի առաքման կազմակերպական (տեխնիկական) գործողություններ կատարելու ժամկետը նյութերի նախապատրաստման 10-օրյա ժամկետի կամ դատախազի կողմից որոշման օրինականությունն ստուգելու 7-օրյա ժամկետի մեջ չի հաշվարկվում, անընդունելի է, քանի որ նման պարագայում խախտվում է ոչ միայն կողմերի հավասարության սկզբունքը, այլ նաև՝ դատարանի մատչելիության սկզբունքը:

Դիմողի համոզմամբ՝ վեճի առարկա իրավանորմը ձևակերպված է այնքան անորոշ, որ իրավակիրառական պրակտիկայում հանգեցրել է այնպիսի մեկնաբանության ու կիրառման, որ խախտվել են ՀՀ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

3. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վարույթն իրականացնող մարմինների կողմից դիմողի համար ցանկալի որոշումների կայացման համար նախատեսված ժամկետների պահպանումը որևէ կապ չունի դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 4-րդ մասի հետ: Ավելին, համապատասխան դատական ակտերում այն վկայակոչելով՝ դատարանն ընդգծել է, որ այն վերաբերում է անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարման ժամկետների սկզբի հաշվարկին,

որպեսզի վտանգի տակ չդրվի կայացված որոշման իրավաչափությունը վիճարկելու եղանակով արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու՝ անձի իրավունքը, այլ ոչ թե քրեական վարույթի հանրային մասնակիցների կողմից կայացված որոշումների ուղարկմանը:

Անհատական դիմումին առաջադրվող պահանջներից է նաև, որ անհատական դիմում կարող է ներկայացնել այն անձը, որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ: Խնդրո առարկա գործով՝ անձը, դիմելով Սահմանադրական դատարան, վիճարկել է դատական ակտերում հիշատակված, սակայն իր նկատմամբ իրավական հետևանքներ չառաջացրած օրենքի նորմը: ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ՝ մասնավորապես արտահայտելով իրավական դիրքորոշում առ այն, որ «...ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ... բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»»:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Միսակ Մարտիրոսյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

5 հոկտեմբերի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-22